ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

15.08.2013թ.
206-5

ՀՀ Ոստիկանության Ճանապարհային
ոստիկանության պետ
պարոն Արսեն Գալստյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գալստյան,

Մեզ է դիմել ՀՀ քաղաքացի Ժիրայր Սուքիասի Սուքիասյանը: ՀՀ Ճանապարհային ոստիկանության տեսանկարահանման միջոցով հայտնաբերված խախտումների արձանագրման կենտրոնի տեսուչ Սերգեյ Սուքիասյանը 08.07.2013թ.-ին ժամը 19:33-ին Երեւան քաղաքում երթեւեկության սահմանված արագությունը VOLVO մակնիշի 26US315 համարանիշի մեքենայով 12կմ/ժ-ով գերազանցելու համար վարչական տույժ նշանակելու մասին 19.07.2013թ.-ի իր թիվ 1300763392 որոշմամբ Ժիրայր Սուքիասյանին տուգանել է 10.000 ՀՀ դրամի չափով:

Հայտնում ենք, որ Ժիրայր Սուքիասյանը գտնվում է արտերկրում, վարչական իրավախախտման արձանագրման ժամանակ չի գտնվել Հայաստանի Հանրապետությունում, ուստի որեւէ կերպ չէր կարող կատարել ՀՀ ՃՈ 19.07.2013թ.-ի թիվ 1300763392 որոշմամբ նկարագրված վարչական իրավախախտումը: Վարչական իրավախախտման հատկանիշները նկարագրված են http://offense.roadpolice.am/ կայքում 134FHRSDENRV անհատական ծածկագրի ներքո տեղադրված տեսանյութում:

Ժիրայր Սուքիասյանին իր իրավունքների պաշտպանությունն արդյունավետ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է ունենալ վերը հիշատակված տեսագրությանը նախորդող և հաջորդող տեսագրությունները:

Ուստի, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել ք. Երեւանում տեղադրված տեսախցիկի կողմից 08.07.2013թ.-ին ժամը 19:33-ին կատարած եւ ՀՀ ՃՈ 19.07.2013թ.-ի թիվ 1300763392 որոշման հիմքում դրված տեսագրությանը նախորդող 5 եւ հաջորդող 25 րոպեների տեսագրությունները (նույն տեսախցիկի): Տեսանյութը խնդրում ենք ուղարկել foi@foi.am էլեկտրոնային հասցեին:

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան